Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 2

Շարունակություն 1

N ԿՄՋՀ-ԲՄԱՇՁԲ-21/1 ծածկագրով բաց մրցույթի գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ջրվեժ «25» հունիսի 2021թ.
ժամը 16:00

Մասնակցում են՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մարգարյան,

Հանձնաժողովի անդամներ՝ Ն.Սանթրոսյան, Հ.Գրիգորյան,

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Պետրոսյան

N ԿՄՋՀ-ԲՄԱՇՁԲ-21/1 ծածկագրով բաց մրցույթի գնահատման մասին

1.Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները ԿՄՋՀ-ԲՄԱՇՁԲ-21/1 ծածկագրով բաց մրցույթի մասնակիցների ներկայացված փաստաթղթերի փաթեթների վերաբերյալ.

1.1 «Գյուղտնտշինմոնտաժ թիվ 1» ՓԲԸ-ի, «Բիդեք» ՍՊԸ-ի, «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ի, «ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ի, «Արտդիանշին» ՍՊԸ-ի և «Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

1.2 «Փարոս-Գազ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին, մասնավորապես.

- Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի և ԿՄՋՀ-ԲՄԱՇՁԲ-21/1 ծածկագրով հրավերի 1-ին մասի 4-րդ բաժնի 4.3 կետի 3)-րդ ենթակետի պահանջի՝

հայտի ապահովումը ներկայացված չէ կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով:

- Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի ա. պարբերության և ԿՄՋՀ-ԲՄԱՇՁԲ-21/1 ծածկագրով հրավերի 1-ին մասի 4-րդ բաժնի 4.3 կետի 4)-րդ ենթակետի 1-ին պարբերության պահանջի՝

ծավալաթերթ- նախահաշիվը չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերում կցված ծավալաթերթի տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2.Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջը՝ էլեկտրոնային եղանակով ծանուցել անհամապատասխանություններ արձանագրված մասնակցին՝ «Փարոս-Գազ» ՍՊԸ-ին, առաջարկելով մինչև 2021 թվականի հունիսի 28-ի ժամը 18:00-ն ներկայացնել արձանագրված անհամապատասխանությունների շտկում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3.Նիստը ընդհատվում է մինչև 2021 թվականի հունիսի 29-ի ժամը 15:00-ն՝ «Փարոս-Գազ» ՍՊԸ-ի կողմից շտկված փաստաթղթերի ներկայացման հիման վրա հայտերի գնահատման նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մարգարյան

Անդամներ՝ Ն.Սանթրոսյան

Հ.Գրիգորյան

Քարտուղար՝ Ա.Պետրոսյան